

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԱՆՈՐԸ¹

*Dum miserrima Armeniorum gens
prope ad interitum adducitur (*).*

Benedictus XV.

* *

Համաշխարհի ընդհանուր աղետքին, Հայ ազգին ճգնաժամին զարթուած շեմին վրայ Ամանորը կը ներկայանայ մեզի... սարսուռ մը կ'անցնի մեր ոսկորներուն մէջ... ապագայն էր ան որ դեռ երէկ մեր շըրթներուն վրայ թուեցաւ մարիլ, և այսօր կը ներկայանայ զրահապատ հեծեալի մը նման, պահ մը տատամտող կանգնած՝ ոսկերիտեաց անհուն դաշտի մը ստուերներէ կարին մէջ, իր բռնելիք ճանապարհը զոննելու... Ողջոյն կը բերէ թէ արհաւիրք, ո՞վ պիտի բանայ անոր պողոպատեայ պատրուակը...

Ազգերու և ցեղերու այս ահեղ ճակատամարտին մէջ, յորում փոքրիկն առաթուր կոխկրտուելու ենթարկուած է, սրածուծեանց և աւերներու անապատէն բարբառոյ ձայն մը տկար և լքեալ հոգիներուն զօրավիզ կանգնեցաւ գոչելով « *Le Nazioni non muoiono; Ազգերը չեն մահեր, umiliate ed oppresse, portano frementi il giogo loro imposto, preparando la riscossa e trasmettendo di generazione in generazione un triste retaggio di odio e di vendetta* ».

Անստուծեան յոյս մը կը վերաբժարծի մեր սրտերուն մէջ. — ողջոյն ընդ քեզ Ամանոր:

Հոգեբանական ճգնաժամէ մը կ'անցնի այսօր մարդկութիւնը. իր բարի և յոռի առաքինութիւններուն բազմափորձ ցոյցադրութեանց մէջ, ալէկոծեալ հոգին է որ կը ներկայանայ մեզի, զուրկ մտքին հաւասարակշռութենէն: Պատերազմը՝ իր հանապազօրեայ տագնապն է, խաղաղութիւնը իր տենչանքը: Յաւերու ընդհանուր աղաղակին մէջ՝ կը միտի յանցաւորի գիտին, որ խլեց իրմէն երջանկութիւնը: Անբաւական և անզօր, պէտք կը զգայ որ ձայն մը իրեն մատանշէ դառն ճշմարտութիւնը: Այսպէս, մարգարէն կամ գուշակը՝ դարուս պէտքը, օրուան հարցը եղաւ: Գրատունները իրենց հին ձեռագիրներուն ծոցէն բազմաթիւ տեսանողներու անուններ հրապարակ հանեցին, ներկայ աւերածներուն քարոզ. այլ այսքան աղէտներուն ինչո՞ւն, կարծես լիով իր զոհունակութիւնը չստացաւ:

* *

Անտարակոյս, Յաւ' բոլոր ազգերը հաւուածեց, այլ Հայոց էութիւնը ընդգրկեց: Դեռ տաք է մեր երկրին հողը արեան ճապաղիքներէն, վառ՝ կրակը քաղաքներէն.

1. Սոյն յօդուածն պարօք Համաբնօրէն հրատարակել, գտնաւում մեր վաղամեծիկ հոգեկից եղբոր Հ. Լևոն Աթոնեանի թղթերու մէջ, որ դեռ իւր ամբաստանութիւնն չէ կորուստ և կրնայ ծառայել անուղղակի կերպով իւր հերքումն Շահան Նաթալի «Վրէժի Անտարանի. Բ.» հատորի մէջ արձակած յուսանած ճիշդերուն:

2. Allocuzione pronunciata nel Concistoro segreto del 6 Dicembre 1915.

3. Benedetto XV. Ai popoli ora belligeranti ed ai loro capi. Lettera. Roma dal Vaticano 28 Luglio 1915.

րուն փլատակներուն տակ. որքան մեր կոպերու եզերքը արտասուքները ճարացած են, բայց երեւակայութիւնն տանջուած է անզէն ժողովրդին անեղ տեսիլներովն, որ իր աքսորանաց ելից ճանապարհին վրայ ցանցց իր ոսկորներուն բեկորները:

Հինգ դարէ ի վեր Յուր մեր պատմութիւնը կազմեց, այս երկար տարիներու շրջանին մէջ անցնալը իր նշանակութիւնէն զերկուեցաւ, մեր Հարց աւանդութիւնները մեր ժառանգութիւնն եղան. միշտ արտասուքներով անոնք մեզի պատմեցին իրենց դառն օրերը, իրենց չարչարանքները, մենք անոնց մէջ պատկերացած տեսանք մեր վիճակը, մեր ցաւալի տեղահանութեանց անեղ վիպասանութիւնը.

Տեսէք զեղանքն ու քաղցրին խոնհապնոր,
Ստոնապաղուկ զետոց լորերն՝ յարին յորդոր.
Տեսէք ռամիկն ու մեծ աստն՝ ամէնքն ազքառ
Տնեակորոյս, բարբարական դաշտէ ի դաշտ.
Փախիլն զնան, լզերնէ ուր, յետ լընային,
Զի սուրն անգութ փրէճ զերենք ցուրտ ի գետին.
Դոքա այլ ո՛ր ըզփախ առել ըշտապ կ'երթան.
Ամէնք ի մէկուկ. ո՛ր, ամէնքն ի զերեզման:
Ահ Եփրատ որ հարկեոր ալքն առել
Փախիլի փորձեն, փորձանք զոյնն, ընկին մեռել.
Ահ անսիրտ խեղճ կընկրտիք որ անլաշակ
Հեռ էրկընուն կանչւոտելով մընան միեակ.
Պարկեշտ աղկուլիք որ արեւէն ծածկուէին
Գազանակերպ մարդկան ձեռքէ ի ձեռք ընկին
Ահ մատաղաշ մայրն որ կաթնածուծ տըզկն առեր
Լեղապատառ խորո մորո կ'երթայ վըրեր,
Պահ մի թողու զորդայն ի վայր, զե՛մ զայ գահնին,
Յամբած ծոցին առել՝ մօր զուլթ յիշէ նըմին,
Բայց սուրն անեղ՝ ո՛չ մօր զըթայ ոչ որգեկին,
Ծաղիկն ու հուզ մէկտեղ կըտէ վառ վառ երոխն 1.

*
* *

Ինչ գործեց այս ազգը՝ որ դարերու պատուհասին ենթարկուեցաւ. Նախախնա-
մութեան հսկողութիւնը ինչո՞ւ պակսեցաւ
այս ժողովուրդին վրայէն:

Մի է նոյն հարցը ներկայացաւ ուրիշ փոքրիկ ազգի մը մեծ Հայրապետին դի-
մաց, երբ հեռուէն կը լսէր՝ Եւրոպական
անեղ պատերազմին ծագման առաջին օրերը՝
իւր ժողովրդին կոտորածները, հայրենիքի
ոտնակոխութիւնը, եկեղեցիներուն քան-
դուսը թշնամի բիրտ խուժանէն, և . Դինչ-
դեռ իւր բողոքանաց ձայնը երկինք կը
բարձրացնէր, ակնարկը թաշկուարեան վրայ
ինկաւ, ուսկից «Էյի, Էյի» յն համարեցաւ
լսել... և զանգատանաց աղաղակը շրթնե-
րուն վրայ մարեցաւ:

Մտածեցի, կը գրէր՝ Փրկչին խօսքերը՝
« Ոչ է աշակերտ առանձի քան զվարդուպետ
իւր և ոչ ծառայ քան զտէր իւր »:

Եթէ բաղդ մը համարելու է աշակերտն
իւր տիրոջ բաղդին վիճակելու, հայութիւնը
կրնայ պարծիլ այս մասին. նա դարերով
իւր մարմնոյն մէջ լրացուց Քրիստոսի չար-
չարանքները: Տիեզերական պատմութեան
մէջ իրեն վիճակեցաւ զոգոթթայի անեղ
ճանապարհին շարայարութեան պարտը,
և արեամբը՝ արբազանել իր կոխած հողը,
այլ մեր օրերուն ազգը համայն քրիստո-
նացաւ, Քրիստոս կարծես ազգին մէջ
մարմնացաւ. փրկագործութեան նորօրինակ
խորհուրդի մ'առջնէն է որ կը գտնուինք:

*
* *

Ծաւր իր հոգեբանութիւնը ունի:
Սկզբունքներու զանազանելովն, տեսա-
կէտները կը փոխուին:

Անհաւատին համար, պարագային, ճա-
կատագրին, նիւթոց անհրաժեշտ հղովոյ-
թին արդիւնքն է: Հաւատացելոյ համար
մեղաց թոշակն է՝ փոխարինութիւն մը
աստուածային վիրաւորեալ արդարութեան,
որով կը մաքրէ մեր բարուց ապականու-
թիւնը և փառաց ճանապարհը կը հարթէ:

1. Աւելան. — Երգք հաւապետի:
2. Մերօրէն Միտանուոր, Նախագահ Արքեպիսկոպոս
Պեղեթոյ և Եպիսկ. Մալիւի. Թուրք հովուական իր

ժողովրդին և բանակին. Մալիւի 1914ի Քրիստոսի Ս.
Ծննդեան առնիկ առթիւ:

3. Թուրք առ Հոովմ. Զ. 23.

Մ Ե Ղ Թ Ը

Ահա միակ պատճառը զոր իմ երեք հարցաքննած մարգարէներս կը մատնանշեն, այս ահեղ պատերազմին:

Ոչ ոք ամբաստանութեան քարը իւր ընկերով զլիւռն կը յանդգնի նետել, այլ երեքը միանգամայն զլուխնին խոնարհած՝ կուրծքերնին կը բախեն:

« Յաւր կը գրէր Տրէվիդի եպիսկոպոսը՝ ոչ միայն սկզբնական մեղքին, այլ մարդկային բոլոր դասակարգներուն, աղքատներուն, հարուստներուն, պանդականներուն, ռամկին, քահանայից, աշխարհականաց, ընտանեաց, քաղաքներուն և ժողովուրդներուն՝ անձնական, մասնական և հաւաքական մեղքերուն պատիժն է. ձեռքերնիս դնենք մեր խղճին վրայ և հարցընենք թէ արդեօք մեր մեղքերն ալ՝ միացած բոլոր ժողովուրդներուն մեղքերուն հետ՝ պատճառ տուած չենք այս սոսկալի աւելբաններուն »:

Ընկերական ընդհանուր բարօրութեանց մէջ Արարիչը փոխանակուած էր արարածի բոլորն հետ, հոգին ոչնչացած էր նիւթին առջև, հեթանոսութիւնը մեծաքայլ կը յառաջէր ամէն ուրեք. աստուծային պաշտամունքները այպանուած էին, տօները խափանուած, ամուսնութիւնը պղծուած, անտարբերութիւնը քարոզուած էր մինչև իսկ դպրոցներու բեմերէն և Աստուծոյ առաջը հայհոյուած: Կեանքը՝ անա՛ գերագոյն բարին, միակ երջանկութիւնը, զլիսաւոր մտածութիւնը ապականած սերնդեան. « Եկէ՛ք, կ'ըսէին կենցաղասէրները, վայելենք ներկայ բարիքները, լեցուինք զինով, օծենք մարմիննիս անուշահոտ իւղերով, պսակուինք վարդերով. երիտասարդ ենք, առողջ և կայտառ, կեսնքը ստուեր մ'է որ կ'անցնի, եկէ՛ք վայելենք զայն »:

Վայելքի՛ արբեցութեան մէջ Յատց հաւրուածը զգաստացուց զամէնքն ալ:

« Հրապարուած . քու առժամանակեայ հաճոյքներէդ, կը գրէր Մէրսիէ, ո՛վ մարդ անմիտ, արբած ոսկիով և արծաթով, անմտօրէն կարծեցիր բաւել անձիդ. մոռցուեցաւ և անծանօթացաւ քեզմէ ճշմարիտ Աստուածը . երբեմն հրապարակաւ ևս հայհոյուեցաւ անոնցմէ իսկ որ իրենց դիրքովը և աստիճանովը պէտք էին ամենուն օրինակ ըլլալ. անիշխանութիւնը տիրած էր ընկերութեան մէջ, զայլթակութիւնը ի լրման էր, անմեղ խիղճերը վիրաւորուած կը զոչէին՝ մինչև ցնրք. և ահա փայլակը պայթեցաւ և մարդկային բոլոր հաշիւները ցրուեցան. Եւրոպան համայն դողաց հրաբուխի մը վրայ կանգնածի պէս:

Հ. Ալիշան մեր երկրին բոլոր աւերածներուն դիմաց կանգնած կ'ըսէ.

Գիտեմ, գիտեմ այն մեր մեղաց պարագն էր արգար,

Բայց դու Հայոց աշխարհիկ, երբ դու այլ հանգչեալ, Երբ տի ցամբին աղբիւր արտառնէր Նահապետիս, Ո՛հ, ես տեսնում այլ մեծ շարքի, ողբամ ըզքիդ, Ողբամ հազար, որ այդ շարեաց պատճառ դուն ես,

Գիտեմ յաջորդք քահանայիցին պակսեցան, Ամեն շարքի մտին ի մէջ ժողովրդեան.

Տաճար, դարպաս, վանք, խորան՝ սփռին յերկիր աւերակ Եւնք և անշնչ զերկրման լինին Հայոց բովանդակ... Խառաք վրայ խառաքի եղաւ կանգնի սե զիշեր. Նահապետիս սիրուն այլ տես. Աստուած, զմեզս հարց մի յիշեր:

* *

ԱՍՏՈՒԱՄԱՅԻՆ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

« Անգթութիւն մը պիտի ըլլար, կը գրէ Մէրսիէ, մատնանշել մեր յանցանքները երբ զանոնք այնքան վեհօրէն կը քաւենք »: Հ. Ալիշան իր տեսածներուն վրայ ծածկոյթ մը կը դնէ, և ուրիշներուն բերնին սուրբ լուութիւն մը կը պատուիրէ:

Այլ դու լռու, ծածկէ՛ դարեք երկրիդ, Մոգես, Մո՛սես զամէն որ ի Հայոց մէջ կու տեսնես. Մի՛ գալն հղարց հարազատաց ընդդէմութիւնս Զանդիտութիւն որ ի հաւատք և ի յուսմանս, Եւ մի՛ զարգար՝ քայց խնամ՝ երկնից ձեռ վե՛ծիւնդդիւր Որ զՀայաստան յատրաստան բբաւ ցան ցիր:

1. Fr. Andrea, G. Longhin. Lettera Pastorale per la quaresima del 1916.

2. Խմաստութիւն Բ. 5-8.



Հարուածներու արդարութեան մէջ կը նշմարեն Նախախնամութեան ձեռքն որ կը մաքրէ և կ'ողջացնէ ժողովուրդները իւր ուղորմութեամբը:

«Մենք կը խոնարհինք անոր արդարութեան առջև և կը յուսանք անոր ողորմութեան վրայ. Սուրբ Տօրիթին հետ կը հաւատանք որ հարուածեց զմեզ որովհետև մեղանշեցինք, բայց գիտենք ալ որ պիտի փրկէ զմեզ, որովհետև ողորմած է»:

Այլ ի՞նչ փոխառա՞ ըզբեզ Հայաստան՝
Երբ ձեռքն Աստուծոյ տեսնուի յանգիման.

Սակայն երկուց արգարութիւն չունի՝ վճար,
իւր հրեական ազգին նման նըզովք յերես՝
Իտարէ ի դար յուսահատեալ տի քնան Հայերս:
ԶԷ. ողորմածն Աստուծոյ թողիլ չէ զՀայաստան:

*
* *

Զ Ո Ն Ը

Տարակոյս չունիմ որ շատերը կարգաւորով այս տողերը, ինծի դարձած նայելով պիտի բռնեն. ժամանակն էր Հայոց մեղքերը յանդիմանելու, գոնէ մեր ժողովուրդը և մեր երկիրը կրնային բացառութեան մը ենթարկուիլ:

Ո՛ր ըզնաւար, ո՛ր տիրապետ, ո՛ր անօրէն
Զեկու սըրով բաժին մ'առնուլ Հայոց երկրէն.
Ո՛ր բարբարոս աւերածու ձեռաց նըշան
Զեթոյ վրկայ մեր չէնքերուն երկնամրման.
Մէկըն կըտրեց, մէկըն հընձեց, մէկըն լափեց,
Մէկն ալ փորեց, զարմատն հանած հողն ըզրուց.
Ա՛յ այս տեսչայ ո՞վ դիմանայ թէ չէ արժան.

Նկատելով այս բոլորը և պատասխանատուութենէ զուրկ ըլլալու համար, իմ ընտրած մարգարէները խօսեցուցի:

Ես ալ համոզուած եմ որ եթէ քաւութիւն մ'էր, եղածը շատ ալ էր, աստուածային արդարութիւնն ալ չափ և սահման մ'ունի, այս պատճառաւ նաև Տրէվիդի եպիսկոպոսը կը զրէ. «Եթէ ոմանց համար ցաւը մեղաց պատիժն է, ուրիշներուն համար

փորձութիւն մ'է, աստուածային նախախնամութեան գաղտնիք մ'է», որուն հոսու չէ մեր միտքը, ինչպէս չեղաւ Առաքելոյը՝ ի ծնէ կոյրին դիմաց, և Տիրոջ դարձած կը սպասէին որ իրենց մատնանշէ յինչ ցանաց աղբիւրը: Աստուծոյ փառքը. այս եղաւ վարդապետին պատասխանը:

Բնութիւնը երբեմն այնպիսի երեւոյթներ յառաջ կը բերէ երկու անյարիր զօրութիւններէ որ մեր զարմանքը կը աստուկադռնէ. բարոյական աշխարհին մէջ անըմբռնելի երեւոյթ մ'է երբ Յայիկ կողքը կը գտնուի միշտ անմեղօրիւնը որ կը չարչարուի և կը տառապի: Արեւ, Յոր, Տօրիթ, Յով. աշխարհի, Կարապետն Յովհաննէս՝ չարչարանքներու մէջ փորձուցան. — Տիրամօր չաւերուն ահագնութիւնը կը պատկերանայ մեզի այն Աստուածային զոհին վրայ զոր Մարգարէն դարերով կանխեց անուանել Այր ցաւոց՝:

Այս ամեններու խումբը՝ դարերու հարկաւորութիւն, մարդկութեան շանթարգելներն եղան որ իրենց վրայ հրաւիրեցին աստուածային բարկութեան կայծերը: Եղեւ կիւնիլ օրով այդ տարբեր պակսելուն համար Աստուած դանապէս կը զանգատի: Մաւարայիցոց եօթն եղբարց կրտսերագոյնը բռնաւորին յայտնի կ'ըսէր. «Իմ և եղբարցս վրայ, այսպէս անգթօրէն չարչարուած, Ամենակալին ցատումը պիտի իջնէ՝ և յետ հալածանաց մրկկին՝ պիտի ծագի խաղաղութեան արուսեակը»:

Ինքն է կրտսեայ զաւակ, ինք շինէ,
Զինչ ըզնու ձրման ըզգարուն հանէ.
Զաշխարհ մեր սիրեաց Աստուած ի սկզբան,
Թէ անձեք երեսմ' սիրոյ էր և այն՝:

Մէքսիէ իւր ժողովուրդը քաւութեան նոխազի պատկերողն է որ կը ներկայացնէ մեզի. «Աշխարհիս մեղքերուն հրապարակաւ քաւիչները ենք»:

1. Մէքսիէ. Թուրք.
2. Եսայի ԽԳ. 3.

3. Երզնկացի.
4. Թուրք հովուական՝ Ս. Մենքեան:

Այս Հայրապետը իւր ազգին Եղիշէն կը հանդիսանայ՝ իր հովուական թուղթին մէջ։ Եթէ չըլլար Եկեղեցւոյ ծիրանի պատ՝ մուռնանը իւր ուսերուն վրայ և հօտապետի մականը իւր ձեռքին մէջ, նա դիտել կու տայ որ իսկոյն հրացանը պիտի առնէր անորէն թշնամւոյն դէմ վազելու։ Իրեն համար Պելճիոյ զէնուորները մասնաւոր գուրգուրանքներու արժանի են։ Զի գիտեր ինչպէս յայտնել անոնց իւր երախտագիտութիւնը, որ հայրենիքի հողին և հաւատքին հետ՝ ազգին արժանապատուութիւնը վեր բռնեցին համայն աշխարհի առջև, փրկեցին զԳողղիան և զԱնգղիան և անոնց երախտեաց արժանաւորեցան։ Իւր ազգին փողերիկ բանակը, դիւցազներու խումբ մ'է, արժանի Աստուծոյ գահոյքը շրջապատելու։ Միեւայել հրեշտակապետի բանակին յաղթութիւններն են որ տարին՝ գերզգօն դժուարային զօրութեան դէմ։ Բան մը իրեն խղճել կու տայ, աստուածաբանորէն անոնց ձեռքն մարտիրոսի դափնին տալու, որովհետեւ զէն ի ձեռին ընկան թշնամւոյն դէմ։ Այլ Աստուծոյ ատեանին դիմաց, կը պատռէ յօժարաբար իր աստուածաբանի մուրհակը։ Իր զօրավարները՝ իր զինուորները, ճշմարիտ վկայներ կը հռչակէ, որովհետեւ անոնք հնազանդած են հայրենի հաւատքին և ընտանեաց սրբութեան գերագոյն ձայնին։ անոնց մէջ վարդանանց պատկերն է որ կը տեսնէ։ Իւր քահանայները խաչ ի ձեռին, եռանդն ի սրտին, քաջալերած, խրախուսած են այդ հերոսները որ տոկուն դիմադրեն և պատերազմին անիրաւ անօրէն և անհաւատ խուժանին դէմ։ ասոնց մէջ Առնոկեանքը կը տեսնէ վերակենդանացած՝ որ իրենց առաքելութեան մէջ բռն նուեցով, շղթայակապ օտարաստան կը տարուին, դատուելու և մեղսելու, իրեն թողով միայն՝ երանելի Խուժիկին նման՝ իրենց նահատակութեան պատմութիւններն աւանդել և իրենց գերեզմաններուն հողը համարուելով հայցել որ բարեխօսեն երկընքէն՝ ոտնակոխուած հայրենիքին փրկութեան համար։

Եւ չեմ ուզեր Պելճիոյ արդիւնքը նուա-

զեցնել։ Ան՝ Եւրոպիոյ զոհը եղաւ, որ իր մարմինը կոխկոտել տալով, ազատեց՝ երկու մեծ ազգերու հետ՝ աշխարհիս քաղաքակրթութիւնը։ քայց իր անձը զոհէլէն առաջ, քաջաբար զէն ի ձեռին պատերազմեցաւ և ապա ընկաւ։

Այլ զոհի մը կատարելութեան համար ըստ իս երկու բան անհրաժեշտ են, անմեղոյքիւնը և տկարոյքիւնը։

Քրիստոսի չարչարանքներուն բիծ պիտի ըլլար անշուշտ՝ Պետրոսի սուրբ, Մաղդոսի ունկը։

Հայաստան եղաւ այն տկար և անմեղ որով որ իւր անձը ի խաչ հանեց և ահագորէն քաւեց աշխարհիս բոլոր մարդկան մեղքերն, այն ազգը եղաւ, զոր Աստուած ընտրեց իրրի մշտամնայ միջնորդ երկնքի և երկրիս միջև, իւր բարկութեան շանթերը իջեցնելու համար։

Այն բերաւ որ նահատակներու երամբ որ չարչարանաց ամէն երևոյթներուն ենթարկուեցաւ, խաչեցելոյն հաւատքին վեհ խոյնեանը եղաւ՝ անհաւատ խուժանին սուրին տակ, մեր ազգն էր, կրնանք համարձակ ըսել՝ ճշմարիտ հաւատքին ներկայացուցիչը, վառ պահելով իր մէջ քրիստոնեայ հոգւոյն հուրը՝ իր արեան հեղմամբը։

Հայոց հաւատաւ է փրկելն հաւատ,
Յառաքելոց քերած նախնեծայ,
Լուսաւորելն տընկեց հաւատաւ
Ու մեր արիւնքս սոսոկէն ըզնաւ։

Ներոնի հալածանաց պատմութիւնը՝ իր շարայարուցիւնը և գերագանցութիւնը մեր աշխարհին մէջ տեսաւ։ Մեր ժողովուրդը խօսուել վկայն է քրիստոնեայ հին դարուց հալածանքներուն ճշմարտութեան, զորս գուցէ մեր դարու յառաջագէտ մարդկութիւնը անհաւատալի զրոյցներ պիտի հռչակէր, եթէ չի շօշափէր մեր մարմնոյն վէրքերը և չայցելէր մեր տաճարները և դամբանները։

Այլ շատ նըշխարներ, մասունք գանադան,
Ի ծոցն է պահել աշխարհս Հայաստան։

Հաս առաքելներ ունի իւր քարոզ,
Հաս սուրբ հայրապետ ամբառ մարտիրոս.
Բիւրաւոր ունի մատրուէք ու տաւար,
Անապատ ու վանք հազար ու հազար:

Այն աւանդութիւնները որ դրախտին սահմանը Հայաստանի մէջ գծել կու տան, Այրարատայ գագաթը Նոյեան տապանը կը հանգչեցնեն, հոգեբանական այնպիսի դրուագներ են որ իսկոյն ազգի մը պատմութեան արուճանակը շօշափել կու տան.

Մեր Տէրն ի յերկնոց ժայրէն երբ իւս
Երկրէն հիման քան յԱրարատ գրաւ.
Այն մեր Մատիսու երկնածե սարէն
Աչեց ըզրկուր՝ վերացաւ նորէն.
Հոն յափեց սահման իւր նախաստեղծին,
Ձեւփրատն ու գլխաւս բաժակ գրաւ գրախտին.
Կենաց փայտին ծառն ի հոն ծաղկեցաւ,
Չար դիտութենէ բարին մեզ արբուաւ:
Ի Հայոց եռդէն կազմեցաւ Արամ,
Զօրն Հայոց Եւան ժըծեց քաղցրահամ:

Հաւատքը ուրեմն մեր ժողովրդին գաղափարականը՝ պատմութեանը առանցքը եղաւ որուն շուրջ հոլովեցաւ իւր կեանքը:

Ազգային պատմութիւնը ուսումնասիրողին անհրաժեշտ է նկատի առնել, այս տարրին զօրութիւնը, Հաւատքը իւր ջահը պիտի ըլլայ մեր պատմութեան մութ գետնադաւրանները խուզարկելուն միջոց, — առանց այդ լոյսին նա կուրորէն պիտի թափափի և մոլորի անել լաբիւրինդոսի մը մէջ և պիտի չի կարենայ ըմբռնել այն մասնական, հաւաքական և անհատական դիւցազնութիւնները, վարդախանայ, Ղեկնդեանց, Ատովմանց երեւոյթները, ինչպէս նաեւ Սանդիստոյ մը, Շուշան վարդենույ մը, Հոփփսիմէի և ուրիշ անբաւ, անպատում մնացած կուսանքներու և վկայներու արութիւնները, որոնք անձեռնի մատնեցին չարչարանաց դառնութեան, անաղարտ պահելու համար իրենց հաւատքը և համոզումները:

Մի և նոյն հաւատքին զօրութիւնն է որ քաջալերեց և մեր եղբայրները վերջին օրերուս անգութ տեղահանութեանց մէջ, Անոնց մէջ վերակենդանացան Յայամա-

ւուրցներուն վկայարանութիւնները: Այն հաւաքական զոհագործութիւնները յորում եկեղեցւոյ նուիրապետական բոլոր զսուս կարգութիւնները մասնակցեցան երբեմն առաջին դարու ըրիստոնէից մէջ, այսօր մեծ տրամագիծներով կրկնուեցան մեր երկրին մէջ:

Ոչ մէկ՝ այլ բազմութիւն մը եպիսկոպոսներու, հայրապետներու, իրենց քահանայից, սարկաւազաց և ժողովրդեան հետ, լուռ և յօժարակամ, անապատներու հեռուարութեանց մէջ, իրենց գլուխը դահճին սուրին տակ խոնարհեցուցին՝ մեզի թողով լոկ այն աղիողորմ պարտքը արտասուօք երգել իրենց ետեւէն. « Փահանայից սարկւս, ազգոց և ամենայն ժողովրդոց ընտրեցոյ ի Տէր, ճահատակալք ի փորձ տանջանաց և ընկալան ի Բրիստոսոս գաղաղանակ մորտիկ, պարգեկն ևոցա զանվախճան զկեանս »:

Մեր ցաւոց և արտասուաց ուրախութեան ճանաչները պէտք են ըլլալ այս նահատակներու սուրբ երամը, որ այնքան վեհօրէն կեանքը արհամարած ժամանակ դահճին խորհել տուին Սրբազան Հայրապետին պատգամը, թէ « Ազգերը չեն մեռնիր » քանի որ անոնք գաղափարականի մը աւանդապահ ներկայացուցիչներն են:

Որքան ջարդեն զմեզ այնքան կը բազմապատկուինք, որքան հալածեն այնքան կը զօրանանք. մեր արիւնը՝ մեր ապագային լաւագոյն սերմն է. կրնանք պարզ-երես ըսել բոլոր մարդկութեան, թէ « Ձեր մեղքերուն հրապարակառ քառիչները մենք ենք »: Թաշը մեր ուսերուն վրայ ծանրացաւ, մահուան ցունդ խաւարեցուց մեր աչքերը, բայց այս առժամանակեայ մահը՝ ցորենի հատին ոչնչացման կը նմանի որ քիչ ատենէն կը ծլի հասկը ատոցացնելով:

Յ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Մեռնողին՝ յարութեան միայնաթիւր ապրեկալելու իրաւունքը տրուած է.

